

**Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
Թ-ԱԴԵՈՍ ԵՎ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱՆՆԵՐԻ
ՏՈՆԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(4 դեկտեմբերի 2004 թ.)

*«Եւ կոչեցեալ առ ինքն զերկոյրասանեսին
աշակերտսն Իւր, եւր ևոցա իշխանութիսն աշ-
տոց պղծոց հասել զնոսս, եւ բժշկել զամենայն
ցասս եւ զամենայն հիւսանդութիսն»:*

(Մատթ. Ժ 1)

Միրելի բարեպաշտ հավաքակիցներ, անհուն վայելքի, հոգեկան ցնձության, հոգեզը-
վարճ գոհունակության, անկողոպտելի երջանկության, անանցանլի բերկրանքի, անպար-
փակելի ուրախության, անբավ երախտագիտության, անկորնչելի խոնարհության և անմա-
րելի սիրո պահ է այսօր մեզ համար, քանի որ օրվա խորհուրդը ողջ հավաքացյալ ժողո-
վըրդին ի մի է բերել Հայաստան աշխարհի բոլոր եկեղեցիներում, որովհետև րոն է համայն
հայության համար, «Տոն Մրբոց առաքելոցն և առաջին լուսատրչացն մերոց Թաղեոսի և
Բարդուղիմեոսի»:

Քրիստոս ոչ միայն ընտրեց Իր աշակերտներին, նրանց վերածելով առաքյալների, ոչ թե
ունեցավ առաքյալներ Իր շուրջը, այլ Ինքն իսկ եղավ Առաքյալը: Ինքն էր առաջին առաք-
յալի փիպարը և փիպարը բոլոր առաքյալների, որովհետև ո՛վ կարող է լինել քրիստոնյա և
առաքյալ չլինել: Քրիստոնյա լինել և առաքյալ չլինել, կնշանակի քրիստոնյա չլինել: Ուս-
տի, Եկեղեցին առաքելություն չունի, Եկեղեցին ինքն առաքելություն է, ոչ թե նրա համար,
որ իր պարտավորություններից մեկն է քարոզելը, այլ Եկեղեցի լինել՝ նշանակում է քարո-
զություն լինել կյանքով, խոսքով և մանավանդ գործով, ըստ առաքյալի խոսքի. «Ինչպես որ
մեռած է մարմինը առանց հոգու, այնպես էլ մեռած է հավաքը առանց գործերի» (Հակոբ. Բ 26):

Հիսուս ոչ թե առաքելությունը որպես բարեպաշտական զգացումի իբրև արտահայտու-
թյուն փվեց Իր առաքյալներին, այլ թե Իրենից հետո Իր առաքյալներն ինչ պիպի անեին,
ճշտեց նրանց ուղեգիծն ըստ Իր հեղկյալ խոսքի. «Ով որ ձեզ լսում է, Ինձ է լսում, և ով որ
ձեզ է մերժում, Ինձ է մերժում, և ով որ Ինձ է մերժում, Ինձ ուղարկողին է մերժում, և ով որ
Ինձ է լսում, լսում է նրան, ով Ինձ ուղարկեց» (Ղուկ. Ժ 16): Ուրեմն առաքյալը նա է, ում երբ
որ լսենք, լսած կլինենք Քրիստոսին, եթե Քրիստոսին անարգենք, Հայր Աստծուն անար-
գած կլինենք, իսկ եթե Աստծուն անարգենք, մենք մեզ անարգած կլինենք, քանի որ մենք
Աստծո ձեռքի գործն ենք: Ահա այսպիսի խորությամբ Քրիստոս ընդգծել է առաքելության
գաղափարն ու փիպարը և մանավանդ առաքելության ուղին է գծել մեր բոլոր առաքյալնե-
րի համար: Ներևաբար, Հիսուս առաքելությունը փվել է որպես իշխանություն, ոչ թե միայն
իբրև պարտականություն. «Առե՛ք Մուրբ Հոգին: Եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված
կլինի. եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. Ի 22):

Բայց առաքյալը նա է, ով նշանակված է Քրիստոսի Ավետարանը քարոզելու ըստ Տիրոջ հեղինակ խոսքի. «Տիրոջ Նոգին իմ վրա է, դրա համար իսկ օժեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրբով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու...» (Ղուկ. Դ 18):

Առաքելության գաղափարը ուրիշ բան չէ, եթե ոչ՝ գաղափարն այն անձի, ով գիտի իր հավատացած ճշմարտության հաղթանակի համար ինքնիրեն փայտ որպես գին: Ո՛չ կայսերական բանակը և ո՛չ էլ հռոմեական լեգեոնները չկարողացան այդ ուժը խորտակել: Նոմեական կայսրության կրկեսների մեջ երբ քրիստոնյաներին նետում էին գազանների առջև, երբ հռչակում էին նրանց մարմինները, և ժողովուրդը փենելով հրճվում էր, երբ կայսրն այդ փեսարաններով ժողովրդին գոհացում էր փայխա, որպեսզի քաղաքական հարցերով չբարդվեն, այդ բոլոր երևույթների երևում չնկատվող մի շող կար: Շար-շարերը երբ փուն էին վերադառնում, իրենք իրենց ասում էին. «Այս ի՞նչ բան է, որ մարդ կարող է նույնիսկ գազանի բերանի մեջ հռչակվել, բայց այդ հավաքը չուրանալ»: Եվ սա ամենևին զարմանալի չէ: և ոչ էլ բնավ փարօրինակ, բանի որ քրիստոնյան պետք է ապրի իբրև մեկ անգամ մեռնող և պետք է մեռնի իբրև հավիտենական ապրող:

Միրելիներ, նույն այս անբանքարաթաքույց կերպով նվիրումի և նահապակության արակ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալները հեղինակված համբառնալուց առաջ փաստերկուսին ուղղած մեր Տիրոջ պարզամին, թե՛ «Գնացեք... և բոլոր մարդկանց քարոզեցեք Ավետարանը» (Մարկ. ԺԶ 16), իրենց հավաքի ու սիրո սերմերը եկան ու ցանեցին հայոց հողում և այն իրենց նահապակության արյունով ոռոգեցին՝ դառնալով Նայոց Եկեղեցու հավերժահաստատ սյուներն ու հայ ժողովրդի հավիտենական կյանքի ռահվիրաները: Իրենց քարոզչությամբ և մանավանդ նահապակությամբ լուսավորեցին մեր ազգին՝ ցրելով հեթանոսության խավարը և մեզ ավանդեցին Քրիստոսի հավաքի ճշմարտությունը, որով էլ հեղաշրջվեց հայի կյանքը:

Նայ ժողովուրդը, որի այսօրվա գավակները լինելու պարիպն ունենք բոլորս անխտիր, միշտ իր կյանքն ապրեց քայլելով առաքյալների գծած ճանապարհով: Պարզ խոսքով՝ մեր ազգն իր մեջ կենդանի, ներգործոն պահեց առաքյալների քարոզած և իրենց իսկ արյունով սրբագրած ու մեզ ավանդած հավաքը: Բայց այդ ճանապարհին հեղինակված մեր ազգը միայն նահապակություններ չարձանագրեց իր կյանքի շրջագծից ներս: Այլև, շնորհիվ քրիստոնեության, ունեցավ նաև բազում հաղթանակների ձեռքբերումներ: Այլ խոսքով՝ Նայոց աշխարհը միշտ «Գեթսեմանի» ու «Գողգոթա», «Խաչ» ու «թաղման պարպեզ», «փշեպսակ» ու «պարանք» չեղավ: Այդ բոլորը լինելով հանդերձ՝ նա եղավ նաև «Թաքոր լեռ» ու «Գալիլիա», ուր մեր ազգն ունակություն ունեցավ պայծառակերպվելու և իր ծանր ու խոր վերքերից հարություն առնելու...:

Եվ մենք, որպես ազգ, հավատարմորեն քայլեցինք այդ ճանապարհով և ամուր պահեցինք Քրիստոսի հավաքը, որ կյանք ներշնչեց գերեզմանվելու պայմաններին հաճախ ենթարկված մեր ժողովրդին, հույս հոսեցրեց մահվան վրանցից այնքան հաճախ այցելված մեր սրբերին, լույս ցնցուղեց հայոց «մթնած երկնք»ից՝ Լուսավորչի կանթեղի շողակաթումով, Օշականում հավերժահանգիստ գրած Սուրբ Մաշտոցի պարզևած գրերով և Ավարայրի դաշտում նույն այդ հավաքի համար մարտնչած Սուրբ Վարդանի հաղթանակած սրով:

Միրելի հավաքացյալ քույրեր և եղբայրներ, մենք պեպք է դադարենք միայն մեր անցյալի, մեր հայրերի կապարած գործերը զովաբանելու, նրանց մեծացման, նրանց փառավորման և նրանցով մխիթարվելու հոգեբանությունից:

Անցյալի փառքն այսօր կյանք է մեզ համար: Նարուպ ենք մենք մեր անցյալով պերճիմաստ դրվագներով ու հուշակոթողներով: Բայց մենք, որպես Նայոց Առաքելական Սուրբ Եկեղեցի, անցյալ չենք: Նազարամյակների վրա փարածված հնամյա պարմություն ունեկեղեցի, բայց մենք, որպես ազգ, պարմություն չենք: Պարմության ամենախոր ընդերքների մեջ արմատներ ներած ժողովուրդ ենք, բայց մենք, որպես ժողովուրդ, գերեզմանված չենք: Մեր ամբողջ երկիրը թանգարան է բաց երկնքի փակ, մեր սրբեղծագործություններով ամենաճոխ թանգարանի փեր ժողովուրդ ենք, բայց մենք թանգարանված ազգ չենք:

Մենք ներկայի մեջ ապրող և դեպի ապագային նայող ու սրբեղծագործող ժողովուրդ ենք: Նուշերով ու հիշարակներով միայն չենք ապրում: Նամառ, անսրեղիփրալի պայքարով մեր գոյությունը փրականացնող և արժեվորող ազգ ենք այսօր ու ամրակուռ կամքով պլորկված՝ ի խնդիր վաղվան, ապագայի մեր լուսավոր, պայծառ հեռանկարներին: Մեր հայացքները հաճախ անցյալին են ուղղվում, բայց այնտեղ չեն սևեռվում, այնտեղ չեն զամվում և այնտեղ չեն սառում: Այնտեղից կրակ ու լույս, փեսիք ու նկարագիր, թև ու թռիչք են առնում ներկան լուսավորելու և մանավանդ ապագան ուրվագծելու համար:

Միրելի հավաքակիցներ, այսօր մեր ազգի լուսավորության փոռն է, մեր հավաքի պանցածման փոռն է, և ես շնորհավորում եմ բոլորիդ այս ուրախ և աննկարագրելի մեծ ու ազգային փոռի առիթով: Միրելի կրոնի ուսուցիչներ և ուսուցչուհիներ, այսօր մեծ ու անզնահարելի է նաև ձեր անսակարկ նվիրումն ու անխոնջ ծառայությունը, ուսրի շնորհավորում եմ նաև ձեզ, այսօր նաև ձեր փոռն է, այսօր ձեր կապարած աշխատանքի արժեվորման ու զնահատանքի օրն է:

Թող առաքյալների նվիրումի ու ծառայության ոգին մշտադարձուն լինի ձեր հոգիներում ձեր քարոզչությունն է՛լ ավելի պարզաբեր դարձնելով: Այսօր մենք արյան նահապակության պեպք չունենք, այսօր ձեր նվիրումի նահապակության կարիքն ունենք, առաքյալների բարոգած ճշմարտությունների պահպանման ու հերազա սերունդներին փոխանցման պեպքն ու անհրաժեշտությունն ունենք ձեր պարագային մասնավորապես, իսկ մեր ազգի պարագային սուրբ առաքյալների բարեխոսության կարիքն ունենք ընդհանրապես:

Եկեք, ուրեմն, միասին աղոթենք, որպեսզի նրանց բարեխոսությունը մշտաժողուն լինի մեր ազգի ու ժողովրդի համար, որպեսզի նրանցից սրացած մեր սուրբ հավաքը երբեք չսասանվի հայի մեջ, այլ գորանա, այլ գորեղացնի մեր ազգին այժմ և հավիդյան:

Շնորհք, սէր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենեւեւանս. Ամէն: